կուց Կամսարականացն եղբարց, զՆերսեհի եւ զՀրահատայ, ըմբռնեալ տանէին ի բանակն Պարսից:

7 Բայց զաւրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի եւ այլ ումեք ի նախարարացն որք ընդ նմայն էին, ոչ պատահեալ՝ դառնայր ոչ եւս քաջ դիւրասրտութեամբ, յաղագս ոչ կատարելոյ խնդրոյն՝ որում հասանելն ցանկայր, եւ վրիպեցաւ: *8* Ստուգեալ վասն կանանցն Կամսարականաց, թէ արդարեւ նոցա կանայքն են՝ զուարճացեալ ուրախանայր ընդ միտս իւր. խորհելով այսպէս, թէ արդ նոքաւք հաստատ կարեմ որսալ եւ ըմբռնեմ զՎահան. քանզի նոքա են նորա սիրտ եւ հաւաստապէս միանձնապէս միութիւն. եւ թէ քակտեալ նոքա ի նմանէ լինին գամ մի[1], եւ նա միայն մնայ առանց այն արանց՝ կա՛մ նուաճեալ հնազանդի[2] մեզ, որպէս եւ կամիմք, եւ կամ փախուցեալ[3] յաւտար երկիր՝ կորնչի միայն առանձինն: *9* Բայց զկանայս նոցա, երկուց Կամսարականացն, հրամայէր ըստ աւրինացն քրիստոնէիցն, որպէս լուեալ էր հաստատապէս, պահել սրբութեամբ եւ ամենայն զգուշութեամբ: *10* Եւ ինքն չուեալ յՈքաղայ[4]՝ իջանէր ի գաւառն Բասեան եւ բանակէր մաւտ ի գեաւղն որ անուանի Դու, ի դաշտին աղբերականց[5], զոր Արծաթաղբերսն կոչեն: *11* Եւ կացեալ անդ աւր մի՝ դեսպան ի դրանէ հասանէր առ նա հրովարտակաւ. յորում գրեալ էր թագաւորին Պերոզի՝ տալ գիտել[6] նոցա զիւր ամենայն Արեաց ուժով ի վերայ Հեփթաղին զդիմեցումն. եւ նմա հրամայէր երթալ ի Վիրս, եւ զթագաւորն Վրաց զՎախթանգ[7] կամ ունել եւ կամ սպանանել եւ կամ ի բաց փախուցանել յաշխարհէն, եւ զՇապուհն ի Միհրան տոհմէն անդէն յաշխարհին Հայոց թողուլ զնդաւ մարզպան:

Զ. Եւ Հազարաւուխտոյ ընկալեալ զհրովարտակն, եւ լուեալ զհրաման թագաւորին՝ թողոյր աստէն զՇապուհն պարսիկ այրուձիով, այրընտիր գնդաւ, զտէրն Սիւնեաց զԳդիհոն առ նմա ամենայն գաւառին Սիւնեաց զնդաւ, եւ ինքն փութով գնայր ի Վիրս: *2* Եւ երթեալ անդ՝ ժողովէր առ ինքն զուխտանենգաց դասս[8], որոց նենգեալ թագաւորին Վախթանգայ եւ երդման Աւետարանին ստեալ՝ առ Հազարաւուխտ գային. ժողովէին առ նա եւ այնք եւս որք ընդ արքայից արքայի միաբանութեամբ էին: *3* Եւ նա ումեմն թագաւորութիւն խոստանայր, եւ ումեմն գահ եւ պատիւ եւ պարգեւ բազում,

1 *Զ.* գան մի
2 *Զ.* հնազանդին
3 *Զ.* փախուցեալք
4 *ԲԳտ.* յՈղոքայ
5 *ՏՏ.* Աղբերականաց
6 *Զ.* տայր գիտել
7 *ԶՏՏ. այստեղ*՝ զՎախտանկ
8 *ՏՏ.* դասն